ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3127-Ա «05» օգոստոսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի հ.13-Ն հրամանով.

1. Հաստատել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման համայնքային ծառայության թվով 18 թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ անցկացնելու ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներն անցկացվելու են Երևանի քաղաքապետարանի՝ Արգիշտիի փողոցի հ.1 հասցեում գտնվող վարչական շենքի 5-րդ հարկի խորհրդակցությունների անցկացման հ.1 դահլիճում:

3. Հանձնարարել.

3.1 Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությանը՝ ապահովել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման համայնքային ծառայության թվով 18 թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների նախապատրաստական աշխատանքների իրականացումը և հաստատված ժամանակացույցի համաձայն՝ մրցույթներն անցկացնելու մասին հայտարարության հրապարակումը՝ http://www.azdarar.am Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.

3.2 Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչությանը՝ ապահովել սույն որոշման 3.1. կետում նշված հայտարարության հրապարակումը՝ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում (www.yerevan.am):

4. Ընդունել ի գիտություն, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման համայնքային ծառայության թվով 18 թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց փաստաթղթերն ընդունվելու են Երևանի քաղաքապետարանի՝ Արգիշտիի փողոցի, հ.1 հասցեում գտնվող վարչական շենքի հ. 212 սենյակում:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկությամբ կարող են հանձնել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության վրա:

6. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246

Հավելված՝
Երևանի քաղաքապետի
05.08.2025 թ.
Հ. 3127-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Հ/Հ	Համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումը	Ծածկա-գիրը	Մրցույթ անցկացնելու օրը և ժամը	Հայտարարու-թյան հրապարակ-ման օրը
1.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության զանգերի սպասարկման և աջակցման բաժնի առաջատար մասնագետ	3.1-628	05.09.2025թ. ժամը՝ 11.00	05.08.2025թ.
2.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության զանգերի սպասարկման և աջակցման բաժնի առաջատար մասնագետ	3.1-632	05.09.2025թ. ժամը՝ 11.00	05.08.2025թ.
3.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության զանգերի սպասարկման և աջակցման բաժնի առաջին կարգի մասնագետ	3.2-703	05.09.2025թ. ժամը՝ 11.00	05.08.2025թ.
4.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության զանգերի սպասարկման և աջակցման բաժնի առաջին կարգի մասնագետ	3.2-704	05.09.2025թ. ժամը՝ 11.00	05.08.2025թ.
5.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության զանգերի սպասարկման և	3.2-705	05.09.2025թ. ժամը՝ 11.00	05.08.2025թ.

	աջակցման բաժնի առաջին կարգի մասնագետ			
6.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության զանգերի սպասարկման և աջակցման բաժնի առաջին կարգի մասնագետ	3.2-706	05.09.2025թ. ժամը՝ 11.00	05.08.2025թ.
7.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջին կարգի մասնագետ	3.2-666	10.09.2025թ. ժամը՝ 11.00	08.08.2025թ.
8.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության քաղաքացիների սպասարկման բաժնի առաջին կարգի մասնագետ	3.2-667	10.09.2025թ. ժամը՝ 11.00	08.08.2025թ.
9.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության արխիվային գործի վարման բաժնի առաջատար մասնագետ	3.1-681	10.09.2025թ. ժամը՝ 11.00	08.08.2025թ.
10.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության արխիվային գործի վարման բաժնի առաջին կարգի մասնագետ	3.2-689	10.09.2025թ. ժամը՝ 11.00	08.08.2025թ.
11.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության արխիվային գործի վարման բաժնի առաջին կարգի մասնագետ	3.2-727	10.09.2025թ. ժամը՝ 11.00	08.08.2025թ.
12.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության գլխավոր մասնագետ	2.2-139	12.09.2025թ. ժամը՝ 11.00	12.08.2025թ.
13.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ	2.3-650	12.09.2025թ. ժամը՝ 11.00	12.08.2025թ.
14.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության քաղաքացիների սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ	2.3-658	12.09.2025թ. ժամը՝ 11.00	12.08.2025թ.

15.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության զանգերի սպասարկման և աջակցման բաժնի գլխավոր մասնագետ	2.3-736	12.09.2025թ. ժամը՝ 11.00	12.08.2025թ.
16.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության զանգերի սպասարկման և աջակցման բաժնի գլխավոր մասնագետ	2.3-737	12.09.2025թ. ժամը՝ 11.00	12.08.2025թ.
17.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության զանգերի սպասարկման և աջակցման բաժնի պետ	2.1-227	17.09.2025թ. ժամը՝ 11.00	15.08.2025թ.
18.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության արխիվային գործի վարման բաժնի պետ	2.1-222	17.09.2025թ. ժամը՝ 11.00	15.08.2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246